

1

ԱՐՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ



3-4

Երեւան 2007

մարտ-ապրիլ


Էջ 97-192

Եզրակացություն

Թե աղյուսակից, և թե մեր կողմից կատարված փորձերի ընթացքում ստացված տվյալներից երևում է, որ Մուխինի թուրմով բուժված ճագարների թարախային վերքերի վերնամաշկապատումը տեղի է ունեցել 11 օրվա ընթացքում: Ստուգիչ խմբի կենդանիների բուժումը կատարվել է Վիշնևսկու օժանելիքով՝ ընդունված վիրաբուժական կանոններով: Չափագրական տվյալների համեմատման արդյունքում, բուժման 11-րդ օրը ստուգիչ խմբի կենդանիների մոտ վերնամաշկապատում չի նկատվել:

Գրականության ցանկ

1. Մ.Պ.Մանվելյան, Գ.Պ. Մարգարյան - Անասնարուժական վիրաբուժություն: 1-ին մաս, Երևան, «Լույս», 1986թ.:
2. Стручков Б.И., Григорян А.В., Бестящев В.К. - Гнойная рана. Москва, "Медицина", 1975.



ՀՏԳ 619:616.98.579.843.95(479.25)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՍՏԵՐԵԼՈՋԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ս.Լ. Գրիգորյան, Ն.Ա. Մուսայելյան

Արցախի պետական համալսարան

Սուրեն Գրիգորյան

Ծնվել է 1937 թ., Շամաղիի մարզում: 1962 թ. ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: ՀԳԱ համաձայնակարանության եւ մակաբուժարանության ամբիոնի վարիչն է, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Հրատարակել է 135 գիտական աշխատանքներ, որոնցից 3-ը՝ դասագրքեր:

Բանալի բառեր - պաստերելոզ, մանրէ, վարակ, համաճարակ, կենդանիներ

Ներածություն

Համաճարակները՝ որպես բնական տարերք, առանձնացվում են ըստ սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմավարական նշանակության:

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում պաստերելոզը: Հիվանդության նկատմամբ գյուղատնտեսական կենդանիները և թռչունները տարբեր աստիճանի ընկալունակությամբ են օժտված: Պաստերելոզով հիվանդանում է նաև մարդը: ճագարների և թռչունների մոտ հիվան-

դությունն ընթանում է ծանր համաճարակների, իսկ մյուս կենդանական տեսակների մոտ՝ վարակվում են տեղաճարակների ձևով: Մինչդեռ, վերջիններս կարող են ակտիվանալ, որի արդյունքում համաճարակի ինտենսիվությունը հասնում է 70-75 տոկոսի:

Բնորոշ համաճարակային գործոն է համարվում կենդանիների առողջ պաստերելակրությունը, սակայն տարբեր սթրեսային գործոններից մակրոօրգանիզմի դիմադրողականությունն ընկնում է, խախտվում է մանրէների հետ ունեցած հարաբերական հավասարակշռություն-

նը և արդյունքում ակտիվանում են պայմանական ախտածին պաստերելանները: Կենդանիների ախտահարման ժամանակ դրսևորվում են հիվանդությանը բնորոշ կլինիկական նշաններ: Փաստորեն, ինքնաբերաբար բռնկվում է էնդոգեն ինֆեկցիայի բնույթով պաստերելոզ: Հիվանդներից արտազատված վարակուճակ մանրէներից էկզոգեն ճանապարհով վարակվում և հիվանդանում են առողջ կենդանիները(1; 2; 3):

Սթրեսային գործոններ կարող են համարվել տարբեր հիվանդությունները, անասնաշենքերի հակասանիտարական վիճակը, անթուլատրելի միկրոկլիման, կենդանիների խնամքը և պահվածքի պայմանները, ցուրտը, գերտաքացումը, անձրևոտ եղանակները և այլն: Հիվանդության առաջացմանն ու տարածմանը նախատրամադրող գործոնների բազմազանության հետևանքով, համաճարակի ինտենսիվությունը կարող է դրսևորվել լայն տատանումներով, հատկապես՝ տարբեր վարակուճակության պաստերելանների առկայության դեպքում:

Մեղմ կլիմայի պայմաններում հիվանդությունն արձանագրվում է աշնանը և գարնանը՝ տատանվելով 1-53 %-ի սահմաններում: Հայտնի է, որ արևադարձային երկրներում, անձրևոտ եղանակներին խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելոզի համաճարակի ինտենսիվությունն ու մահացությունը հասնում են 70-100 %:

Նյութը եւ մեթոդը
Հիվանդության ստացիոնար բնույթը պայմանավորված է ոչ

միայն տևական մանրակրությամբ, այլև թռչունների մոտ վարակի տարածման կենսաբանական փոխանցողներ համարվող վարակակիր տզերի առկայությամբ: *Dermanyssus gallinae* և *Argas persicus* տզերը, որոնք մակաբուծվում են թռչունների վրա, հիվանդության հարուցիչը կարող են կրել ավելի քան 2 ամիս և դրանով պատճառ հանդիսանալ նոր վարակների առաջացման:

Հիվանդության ախտորոշման ընդհանուր և առանձնահատուկ մեթոդներով բացահայտվել է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքը անապահով է պաստերելոզ հիվանդության նկատմամբ: Վարակի ինտենսիվությունը, վաղեմությունը, տարածման մասշտաբները, ախտահարված կենդանիների տեսակները, ստացիոնար բնույթը և բռնկման պարբերականությունը բացահայտելու նպատակով, կատարվել է ամբողջ տարածքի համաճարակաբանական շրջանացում: Ուսումնասիրությունները կարելի է կատարել ըստ հիվանդության տարածման ուժգնության, ինչպես նաև՝ առանձին վարչական շրջաններում դրա տարածման ինտենսիվության:

Համաճարակային միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով նախընտրել ենք հետազոտությունները տեղայնացնել ըստ վարչական շրջանների:

Համաճարակաբանական շրջանացումը կատարվել է ութ տարիների՝ 1999-2006թթ. հետազոտության արդյունքների հիման վրա: Ուսումնասիրվել են Ստեփանակերտ քաղաքը, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Շուշիի շրջանները:

Տարածքի համաճարակաբա-



Նորայր Մուսայելյան
Ծնվել է 1977թ., Արցախի Մարտունու քաղաքի Թաղավարդ գյուղում: Ավարել է Արցախի դեռական համալսարանը՝ անասնաբույժ բակալավրի որակավորումով: 2005թ. կարմիր դիպլոմով ավարել է մագիստրատուրան եւ նույն տարում ընդունվել Հայաստանի դեռական ագրարային համալսարանի աստիճանատուրան:
Ներկայումս դասախոսում է Ստեփանակերտի գյուղատնտեսական իոլեջում եւ Արցախի դեռական համալսարանում:

РАСПРОСТРАНЕНИЕ ПАСТЕРЕЛЛЕЗА СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ЖИВОТНЫХ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ
С. Григорян, Н. Мусаелян
Арцахский Государственный университет

Ключевые слова – пастереллёз, микроб, инфекция, эпизоотия, животные

Краткое содержание
В результате эпизоотологических исследований было установлено, что пастереллёз сельскохозяйственных животных и птиц значительно распространён на всей территории республики Арцах. Данные клинических, патолого-анатомических, бактериологических исследований, а также биопробы на лабораторных животных свидетельствуют о довольно напряжённой эпизоотической ситуации по этому заболеванию в республике.

գործոնների և անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացման մակարդակի հետ:

Պաստերելոզի համաճարակաբանական կարևոր ցուցանիշ է նաև նրա ուղեկցումը խառը վարակներով: Ասկերանի շրջանում

խոզերի պաստերելոզը շատ դեպքերում, որպես երկրորդային վարակ, ենդոգեն ձևով դրսևորվել է ժանտախտով հիվանդանալու դեպքում: Այսպիսի ախտահարումները համարվում են պաստերելակրոբյան ակտիվացում, պայմանավոր-

ված՝ ժանտախտով սրբես գործնազդեցությամբ: Նույնը վերաբերում է նաև Մարտունու տարածաշրջանի խոզերի մոտ պաստերելոզային և սալմոնելոզային խառը վարակների դրսևորումներին:

Եզրակացություն

1. Արցախի Հանրապետության 5 տարածաշրջանները անապահով են պաստերելոզ հիվանդության նկատմամբ: Հիվանդության ախտորոշումը կատարվել է մանրէաբանական և կենսաբանական եղանակներով:

2. 1999-2006թթ. համաճարակաբանական հետազոտության տվյալներով արձանագրվել է 10,1 անապահով կետ, որից՝ 40-ը (39.6 %) բաժին է ընկնում Ասկերանի շրջանին:

3. Պաստերելոզի համաճարակի ինտենսիվության և անապահովության առավել բարձր ցուցանիշ է արձանագրվել 2006 թ. առաջին կիսամյակում (19 անապահով կետ), որը՝ ըստ համաճարակաբանական շրջանացման, վկայում է կենդանիների հիվանդության մակարդակի հետագա բարձրացման մասին:

Գրականության ցանկ

1. Сосов Р.Ф. - Эпизоотология. 1974 г., с.99-106.
2. Бакулов И. А. - Руководство по общей эпизоотологии. 1979, с.89-156.
3. Ս. Լ. Գրիգորյան - «Գյուղատնտեսական կենդանիների համաճարակաբանություն և ինֆեկցիոն հիվանդություններ, էջ 217-226:

ՀՏԳ 633.88:[619:616.98:578.835.1] (479.25)



Էրիկ Նիկողոսյան

Ծնվել է 1969թ., Երեւանում: 1992թ. ավարտել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը՝ անասնաբույժի մասնագիտությամբ: 1998թ. ստացել է անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական ասիժան:

2000թ.-ից աշխատում է Հայաստանի Պետական ագրարային համալսարանի բերրադիվիզիոնի վիրաբուժության ամբիոնում՝ որդես դասախոս: Ունի 12 գիտական աշխատանք:

ԲԶՆԻ «ԳԱՀԱԿԱԼ» ԽՈԶԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՐՈՇ ԴԵՂԱԲՈՒՅՄԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՍՏՐՈՒՆՏԵՐԻՏՈՎ ՀԻՎԱՆԴ ԽՈՃԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ

Է.Ա. Նիկողոսյան

Հայաստանի պետական ագրարային համալսարան

Բանալի բառեր - դեղաբույս, խոճկոր, գաստրոէնտերիտ, դիսբակտերիոզ, հակաբիոտիկ

Ներածություն

Գյուղատնտեսական կենդանիների մատղաշի ստամոքսաաղիքային համակարգի ախտահարումների, մասնավորապես՝ գաստրոէնտերիտների բուժման նպատակով,

վերջին տարիներին հաճախ սկսել են կիրառել բուսաբուժությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մատղաշի օրգանիզմը շատ զգայուն է ուժեղ ազդեցություն ունեցող քիմիական պատրաստուկ-